



ԱՐԵՎԻԴՐ



“ԱՐԵՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ”

ՆՈՐ
ՏՐՁՈՒՆ 1954

NO.
SHEP

«بن» مجله ارمنی شعری، دیلمان، ادبی، فناوری، لغتی، انسانی

"**SION**", an Armenian Monthly of Religion, Literature and Philology
Printed in JERUSALEM

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ		ԵՐԵՒ
— Հնդկահայութիւնը (Պ.) .		261
ԿՐՈՆԱԿԱՆ		
— Ազգին լոյսը .	ԶԳՈՆ Ն. ՎՐԴ. ՏԵՐ ՑԱԿՈՑՅԱՆ	265
ԲԱՆԱՍՏԵԱԾԱԿԱՆ		
— Վարանդին .	ԵԳԻԳԱՐԴ	269
— Կը սիրեմ . . .	Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	273
— Աշնանային .	Ն. Պ. ԶԱՓԱՏԱՐԵԱՆ	273
ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ		
— Սակառադեպ բայարմաներ .	Ն. ԵՊՈ. ՇՈՎԱԿԱՆ	274
— Գիլյամէսի դիւցազներգութիւնը (9) .	ԱՆՈՒՇԱԽԱՆ ԱԲԴ. ԶՊ. ԶՊ. ԶՊ. ԶՊ.	276
ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ		
— Պատ Արշակունի (3) .	ՀՐԱՆԴ Ք. ԱՐՄԷՆ	280
— Հայոց անձնանունները (4) .	ՊՐՈՅ. Հ. ԱՃԱՌԵԱՆ	283
ՊԱԴԵՍՏԻՆԱԳՐԱԿԱՆ		
— Մեռեալ ծովը (2) .	ՊԱՐԳԵՒ ՎՐԴ. ՎՐԹԱՆԵՍՅԱՆ	286
ԳՐԱԽՈՍՎԱԿԱՆ		
— Մեր եւ Ամուսնութիւն .	Ե.	289
Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ		
— Եկեղեցական - Բեմական .		290
— Պատօնական .		291
— Վերաբացում Ս. Արոռոյս վարժարանաց .		292

**ՍԻՌՆ-ի Տարեկան բաժնեգինն է՝
բոլոր Երկիրներու համար՝ Անգլ. Շիլին 20**

Redaction of the Armenian Monthly SION

Armenian Patriarchate,

P. O. B. 4001

Old City - Jerusalem

Via Amman (Jordan)

—Uhuh—

БЛ. СУРБ — УПРЯГУН

1954

三一書局影印

◎下 10

ԽՄԲԱԳԻՔԸՆԿԵՐՆ

ՀԱԴԿԱՀԱՅԱՅՈՒԹԻՒՆԸ

(0.6871, 0.1870, 0.5117)

9.

8 արդ մեր արտայայտութիւնները Հնդկահայ պատուական գաղութի մասին եղան մեծաւ մասամբ յուսալքիշ տեղեկազրութիւններ՝ գաղութին եկեղեցական, ազգային, մշակութային և կրթական կեանքի մասին։ Այս վիճակը սակայն միայն Հնդկաստանի հայ գաղութին յատուկ չէ, անիկա պատկերն է առաւել կամ նուազ չտիերով մեր բոլոր գաղութներուն, որոնց այս կերպ լրուած ըլլալուն պատճառները ծանօթ են բոլորիս։

Մասնաւորելով մեր խօսքը Հնդկահայութեան մասին, անհրաժեշտ կը նկատենք յայտարարելու հոս թէ այդ գաղութը մէկ դարէ ի վեր լքուած է իր տփուը ճակատազդին, առանց վայելելու եկեղեցական և ազգային մարմիններու կարելի հոգեւոր և բարոյական օժանդակութիւնը։ Էջմիածնէն սկսեալ մեր ըստ նույիրապետական Աթոռներն ու անոնց շուրջ կազմուած ազգային մարմինները, Հնդկահայութիւնը յիշած են միայն այն պարագաներուն, երբ պէտք ունեցած են անոր նիւթական օժանդակութեանը, ազգային այս կամ այն աղէտի հետեւանքով ստեղծուած։ Անկէ յետոյ, և այս պարագան դարձեալ միայն Հնդկաստանին չի վերաբերիր, մենք միշտ անտարբեր մնացեր ենք մեզմէ հեռու մեր արենակիցներու բարոյական օժանդակութեանը, երբ անիրկա պայմանու որպես մեր արենակիցներու բարոյական օժանդակութեանը, հետեւաբար անթուելի կոնսաւորուած չէ մարդկային կարգ մը հաշիւներով, հետեւաբար անթուելի կոնսաւորուած որոնք դարձերով տեղի ունեցեր են, եղած են շատ յաճախ ո՛չ թէ ըստ անելու որոնք դարձերով տեղի ունեցեր են, եղած են շատ յաճախ ո՛չ թէ մեր կամքէն անկախ կամ անոր հակառակ պայմաններու միջէ, այլ ամենու անդեղչելի պատասխանատուութեամբը։

Վերջին հարիւրամեակի ընթացքին հնդկանայութեան կոչերը կըմբածի
եկեղեցական ու ազգային մարմիններու, և բողոքները ներքին պառակտում-
ներու հետեւանքով, տխուր ապացոյցներ են գալութիւ լքուածութեան։ Շուրջ
քառասուն տարիներ առաջ, թորգոմ Սըբագանը, իբրև նուիրակ Հնդկասուանի

Հայոց, ակնարկելով այս տիսուր իրողութեան, այսպէս կ'արտայայտուի իր Տեղիանային մէջ : « Հոս չկայ ո՛չ թուրքին սարսափը և ոչ քիւրտին սոսկումը, ո՛չ մարդուն լեզուն կը կտրեն, սախպելու համար որ չխօսին իրենց սեպհական բարբառը և ոչ ալ կ'արգիւեն իւրաքանչիւր ցեղի՝ իր ազգային կեանքին ու զիտակցութեան տիրացումը՝ խաղաղ և քաղաքակրթական պայմաններու մէջ, Բրիտանական արդարակորով կառավարութիւնը կը յարգէ ամենէն յետնեալ տոհմին իսկ ցեղական իրաւունքներն ու բարի ձգտումները, թոյլ տալով որ իւրաքանչիւրը ազատօրէն պաշտէ իր կրօնքը, պահէ իր պատմութիւնը, զործածէ իր լեզուն, չկորմնցնէ իր անցեալի յիշատակներն ու յիշատակարանները, որոնց անեղծ պահպանութեանը վրայ ինքն իսկ կը հակէ կանոնեալ օրինադրութիւններով : Այսպէս որ դար մը ետքը, հակառակ կատարուած ամէն բարի մաղթանքներու, եթէ Հնդկաստանի Հայութիւնը դադրի զոյութիւն ունենալէ, ազգը իրաւունք պիտի ունենայ ամբաստանելու ոչ զոք բայց եթէ ինքզինքը » :

Նոր Զուղայի առաջնորդութիւնը, իբրև անմիջական և հոգեւոր վերին մարմին Հնդկաստանի թեմին, ըրած է ու կ'ընէ իր կարելին միայն, սակայն ի վիճակի չէ յանձնանձելու զաղութիւն ամբողջական պէտքերը և համսնելու Արաբիոյ ծովէն մինչև Հնդկաչին և Մալայեան արշիակեղաքոսը ցրուած այս հեռաւոր զաղութներու ազգային և հոգեւոր պէտքերուն : Կրօնական, ազգային և կտակային հարցեր ու կարգադրուելիք պարագաներ կան, որոնք Եկեղեցւոյ բարձրագոյն նուրիբապետութեան վճիռներուն կը կարօտին ձեւի մը զալու համար, և ազգային լուրջ մտահոգութիւններու՝ անոնց բարիքը ի նպաստ ազդին և զաղութի ապագային օգտագործելու համար :

Պարսկաստանի թեմը և Զուղայի առաջնորդութիւնը կրօնական տեսակէտով այսօր ինք արգէն պէտք ունի նուրիբապետական վերին հսկողի և առաջնորդի, վասնզի այժմու իր հոգեւոր վարչութիւններու իրաւասութիւնը կը մնայ սահմանաւոր, որքան ատեն որ այդ թեմը զրկուած կը մնայ իր վերին հեղինակութենէն : Միւս կողմէն այժմու Հնդկաստանի թեմին անջատումը Զուղայի առաջնորդութենէն և վիճակէն, այս վերջինի համար բարոյական և նիւթական զրկանքի պատճառ մը չի հանդիսանար այլևս, որովհետեւ այժմու հնդիկ ազգային կառավարութեան օրով, Հնդկաստանի Հայութեան վերոյիշեալ կապերը Զուղայի Հայութեան և առաջնորդութեան հետ, դադրածեն զոյութեան երբեմնի իրենց իրաւունքներէն : Եթէ իրերու այժմու վիճակը շարունակուի, քանի մը տարիներ վերջ, Նոր Զուղայի առաջնորդութիւնը ի վիճակի պիտի չկընայ ըլլալ նոյնիօկ քահանաներ հասցնելու Հնդկաստան, ինչպէս կրցած է ընել ցարդ :

Իրական բարիք մը եղած պիտի ըլլար, Հնդկահայութեան համար, եթէ զաղութը կարենար ընտրել իր Առաջնորդը, ստանալէ առաջ նախօրօք Էջմիածնի հաւանութիւնը : Առաջնորդին զործը պիտի ըլլար կտզմակերպել տարիներէ ի վեր տեղական յատուկ պայմաններու համաձայն վարուած վարչական, հոգեւորական և կրթական կեանքը, վարելով զանոնք մասամբ համաձայն ցարդ ընդունուած սովորութիւններու և մասամբ համաձայն այս զործերուն յատուկ մեր Ազգային Ահմանադրութեան :

Հնդկահայութիւնը հոգելից և կրօնասէր է, բայց լուռ է իր Եկեղեցւոյ

բեմը։ Անիկա սիրայօժար կը հետեւի ու կը մասնակցի ամէն բարի և գեղեցիկ ձեռնարկի, որ կրնայ օտարներու առջև բարձր բռնել իր քրիստոնեայ և աշակոյթի տէր ազգին անունը, բայց չունի այդ բոլորը ընելու ընդունակ իր եկեղեցական ու ազգային ներկայացուցիչը, որ կարենայ բովանդակ Հնդկաստանի մէջ միութեան կապ մը դառնալ։

Ազգային կեանքը պէտք ունի կազմակերպութեան, անհրաժեշտ է որ Հնդկաստանի, Պիրմանիոյ, Մալայեան թերակղզին և մացեալ մասերուն մէջ ընակող բոլոր հայերը ազգային և ընկերային յարաբերութեան մէջ լինին իրարու հետ՝ մտքով, սրտով և կեանքով, և այս կ'իրազործուի չնորհիւ մամուլին։ Իսկ մեր առաջին խմբազրականին մէջ՝ թէ «նոր Ազգարար»ի հրատարակութիւնը կալկաթայի մէջ, ծանօթ զրող Պ. Զիան Հանանեանի ջանքերով, սրտապնդիչ պարագայ մըն է և կանչուած է բարերար դեր մը կատարելու Հնդկանայութեան մէջ, մէկ կողմէն վերքերելով անոր փառաւոր անցեալի սիրազործութիւնները և միւս կողմէն հոգեկան կապ ըլլալու իր ցրուած մասերու միջև։ Սակայն մեր կարծիքով, որպէսզի «նոր Ազգարար»ը Հնդկաստանի անցեալը միայն լուսաւորող մոմ մը չըլլայ և կարենայ մտքի և հոգի կապ մը ըլլալ, թէ Հնդկաստանի մեր զանազան գաղութներուն և թէ Սփիւռքի միւս Հայ հատուածներուն միջև, անհրաժեշտ է որ ան, նուազագոյն, ամսաթերթի վերածուի, և սկզբնական շրջանի մը համար ունենայ իր անզիներէնի բաժինը։ Անշուշտ թէ այս պարագան կը կարօտի նախ նիւթական և ապա բարոյական օժանդակութեան։ Առաջին մասը զոհացնելու պարագան՝ զժուար չէ Հնդկանայութեան համար, քանի որ ան իր տրամադրութեան տակ ունի բաւարար չափով զումարներ, նման մշակութային ձեռնարկի մը յատկացնելու համար։ Գալով մարդերու զժուար չէ զանոնք ևս ճարել։ «Նոր Ազգարար»ի ժրաշան խմբազրին զատ, հոն կան Մարդասիրական ձեմարանի և անզինական կրօնական բարձրագոյն դպրոցի ընթացքը աւարտած և ժամանակ մըն ալ հայեցի կրթութեան համար Ս. Աթոռոյ ժառ. Վարժարանի և Բնծայարանի ուսման հետեւած, Արժանապատիւ Տ. Արամայիս Քահանայ Միրզայեանը։ Այս հոյին քովի ի վեր մօտէն և հեռուէն զժուար չէ զտնել տակաւին ուրիշներ՝ որոնք կարենան զործը յաջողութեամբ ի զուլի հանել։

Որքան ատեն որ Սփիւռքի մէջ մեզի կը պակսին Հայրենի հոգի և պետականութեան բարիքները, մեր զերազոյն ճիզզ պիտի ըլլայ ստեղծել մշակութային, կրօնական և հոգեկան կապերու սէրը հոգեկցորդ միութեան մը և ազգային հասարակաց նմանութեան մը մէջ, պահելու և պահպանելու համար զույթատեման զերազոյն ճիզին լծուած մեր ցրուած մասերը արտասահմանի մշուշյատեման զերազոյն ճիզին Հնդկաստանի, այլ բովանդակ Սփիւռքի մէջ, ներուն մէջ։ Այլապէս ոչ միայն Հնդկաստանի, այլ բովանդակ Սփիւռքի մէջ, ներուն մէջ։ Այլապէս ոչ միայն Հնդկաստանի, զիտակցութիւնը դէպի անցեալն ու ատակաւ պիտի արօտանայ մեր ազգային զիտակցութիւնը դէպի անցեալն ու պազան։ Ի՞նչ արժէք կրնան ունենալ անցեալի թանկազին ժառանգութիւնները, պազան։ Ի՞նչ արժէք կրնան ունենալ անցեալ անցեալի թանկազին ժառանգութիւնները, մայրենի լեզուն, զրականութիւնը, պատմութիւնը, եթէ մինք չկարենանք զանոնք օդատակործել մեր կեանքին մէջ, եթէ անոնք «անձանօթ աշխարհ» զանոնք օդատակործել մեր կեանքին մէջ, եթէ անոնք «անձանօթ աշխարհ» զանոնք օդատակործել մեր կեանքին մէջ, բայց չենք ազգովին, բազմաթիւ են դառնան մեզ համար։ Նոր պայմաններու առջև ենք ազգովին, բազմաթիւ են դառնան մեզ համար, որոնք մէկ օրէն միւսը կրնան բացուիլ մեր առջև, հետեւանականկան միւսը, որոնք մէկ օրէն միւսը կրնան բացուիլ մեր առջև,

բար նոր պայմաններու և պահանջներու համեմատ պէտք է կազմակերպուին մեր զաղութները՝ եթէ չենք ուղեր խեղդամահ ըլլալ : Յուսահատութեան քարոզը կարգալ չէ մեր այս տողերուն նպատակը, այլ ըսելու համար միայն թէ արտասահմանի մեր զաղութներուն մէջ կարենալ պահելու և շարունակելու մեր զոյութիւնը մենք պէտք է թօթափենք մեզմէ, ծուլութեան, անփութութեան և զիրար չնանգուրժելու զգացումները և չերմեռանդ հաւատքով և կազմակերպեալ և տոկուն ճիգերով ընենք մեր կարելին, արթուն և զգաստ պահելու մեր զաղութներու մէջ հոգեւոր և ազգային կեանքի զործօնները :

Իրեկ վերջաւորութիւն մեր այս նշմարներուն, Հնդկահայութեան շուրջ, մեր սրտազին չնորհակալութիւնները Հնդկաստանի մեր հարազատներուն, որոնք ընդառաջելով Ս. Աթոռոյ օգնութեան կոչին և իր Սրբազնն նուիրակի միջոցաւ կարկառուած ձեռքին, ըրին իրենց կարելի լաւագոյն օժանդակութիւնը, յօգուտ Ս. Աթոռոյ և վանքարնակ մերազն ժողովուրդին :

Մեր սրտազին չնորհակալութիւնը նախ կալկաթայի Հոգեւոր հովիւներէն և Ս. Աթոռոյ հարազատներէն Արժանապատիւ Տ. Արամայիս Քհյ. Միրզայեանին յօգուտ Ս. Աթոռոյ եղած հանգանակութեան մէջ իր բերած անկշռելի բարոյական զոհողութեանը համար : Ենորհակալութիւն նոյնպէս Տ. Բագարատ Քհյ. Ներսէսեանին, իր ժրաշան մասնակցութեանը համար հանգանակութեան զործին մէջ :

Ճերմ չնորհակալութիւններ կալկաթայի եկեղեցւոյ Վարչութեան աղքանուէր անգամներուն, պատուական նախագահ Մակրտի Ճոնէն սկսեալ, սիրելի և կորովամիտ Մայքլին, Գրէզըրի Յարութիւնին, Նեւթըն Պազիլին և միւս Պազիլին, Ալէքսի Պիթրին, Կօ Կօ Մակրտիչին, Մարզարին, միւս Գրէզըրին և բոլորին իրենց հայու վայել կեցուածքին և զգացումին համար :

Մեր անխառն սէրն ու համակրանքը նոյնպէս Ռանգութեան, Տէր և Տիկին Ճօ Մարթինին, Պ. Յարութիւնին, Պ. Մայնսին և բոլորին առ հասարակ : Խնչպէս նաև Պոմպէյի ազնուամեծար Հոգաբարձութեան սիրելի անգամներուն, Հայկ Գալայճեանին, Տօքթոր Խաչատուրեանին, Տօքթոր Արամին, Եամեանին, Տիկին Բազիլին, Պ. Արտաշէսին, Պ. Սանոսեանին, Պ. Ճողէֆին և իրենց ընտանիքին, և Պոմպէյի հասարակութեան մեր բոլոր հարազատներուն, որոնք զիտցան նոյնքան չերմ զգացումներով դիմաւորել մեր կարիքը :

Տէրը թող վարձահատոյց ըլլայ բոլորին, մէկի փոխարէն հազարապատիկ հատուցանելով անոնց :



ԿՐԹՈՒՅՆԿԱՆ

ԱԶԳԻՆ ԼՈՅԱԾ

(ԱՐԲՈՅ ԹԱՐԳՄԱՆՁԱՑ ՏՕՆԻՆ ԱՌԹԻՆ)

«Դուք եք լոյս աշխարհի»
(ԱԱՏԲ - Ե. 14):

Սև եմ լոյս աշխարհի (Յազհ. Բ. 12) յայտարարեց Յիսուս։ Հայութիւնը հաւատաց Անոր և ազգովին ամենէն առաջ չնաւնց զ Այս։

Աչխարհի Լոյսը՝ լոյսն եղաւ Հայաստանի։

Անոր մեր Լուսաւորիչները, Գրիգոր, Սահակ և Մեկորոպ։

Անոնք արքանեակներն են Արդարութեան Արքակակին։ Բանքերները Անօկրնական Բանին։

Տէրն ուզեց որ իր հետեւորդները լոյս լինին աշխարհի, և Դուք եք լոյս աշխարհի։

Մեր մէջ կենաց Բանին Թարգմանիչներն եղան անոնք։

Ինչպէս որ աշտանակին վրայ վասող ճրագը կը լուսաւորէ առւնը, նոյնպէս պէտք է լինին քրիստոնեաները։

Անրպեսի տեսնեն ձեր բարի զործերը եւ վառաւորեն ձեր Հայրը որ երկին էն (Մատթ. Ե. 16)։

Թարգմանիչներու կեանքն ու գործը փառաւորութեան եղաւ Երկնաւոր Հօրը։

Անոնց լոյսն ու փառքը կը չողայ հայ մշակոյթի անցեալ, ներկայ և ապագայ հորիդոններուն վրայ։

Անոնք լոյս եղան մեր աշխարհին սա իմաստով որ, Աւետարանէն իրենց ընդունած առատ կեանքը չթաքուցին, հոգեոր լոյսը ծաւալեցին Հայուստանի վրայ, որպէսզի իսկական կեանքն ու կենդանութիւնը համատարած լինին հայ ժողովուրդի վրայ։

Ահա փառաւորութեան Աստուծոյ։ Փառքն ու մեծութիւնը Լուսաւորիչներու, որոնք չողերն են Լոյսին ուր ծագեաց ի խաւարի։

«Եթ լոյսն նեմարիս, որ լուսաւոր առնե զամենամի մարդ, որ զալոց է յաշխարհ» (Յազհ. Ա. 9)։

Աստուծած է բուն լոյսը և ազրիւրը լոյսին։

Ստեղծիչ լուսոյ եւ յօրինիչ զիշերոյ, կեանք ի մահու եւ լոյս ի խաւարի, յոյս ակն ունողաց եւ երկայնմասուրիւն տարակուալոց (Նարեկ, Բան Դդ)։

Անոր համար է որ եկեղեցիով կը ձայնակցինք Շնորհալիին։

Լոյս, արարիչ լուսոյ, բնակեալի ի լոյս անմատոյց, Հայր Երկնաւոր (Ժամագիրք)։

Լոյսէն բզիսող լոյս է Ան, որուն համար կը խոստովանինք։

Լուսովդ նո, Քրիստոս, ամենինան լուսաւորեցաք (Ժամագիրք)։

Նման օրներգ մը, նման մաղթանք մը մեր մեծասաքանչովք երբեք պիտի չկարենայինք մրմնջել սերունդէ սերունդ, եթէ Առոր Գրիգոր, Սահակ և Մեսրոպ չողակաթումը չլինէին Անձառելի Լոյսին և չզառնային Լուսաւորիչները հայ հոգիներուն։

Ուստի, ամէն անզամ որ հայերէն զիւրին և զիրքին ներշնչած խանդավառութեամբ կը պանծացնենք Արքոց Թարգմանչաց յիշատակն ու գործը, նախս պարտինք անոնց օրինակին հետեւելով փառաւորի զլատուած, որ Քրիստոսով լուսապուն է աշխարհի և մեր Լուսաւորիչներուն, որնց սիրտն ու հոգին այնքան պայծառացան գեղեցկութեամբը յաւիտենական Լոյսին։

Ան է որ չնորհաց Թուականի արշալոյնին իսկ ծագեցաւ, Չորրորդ և Հինգերորդ գարերուն մանաւանդ բարձրացաւ մեր երկնակամարին վրայ, ու անկէ ի կեր հայ գիրին և մշակոյթին ճառագայթումներովը կեանք և կենսունակութիւն կուտայ Հականք և հաստանի և հայ ժողովուրդին։

Հետեւարար, ինչ որ իրը երախտագիտական տուրք տարուէ տարի կը մատուցանենք Հայաստանի Լուսաւորիչներուն և անոնց գործը յաւերժացնող ընտրանիին, ի գնահատութիւն հայերէն ալբ ու բնին և հայկական մշակոյթի օրհնութեան, հարկէ որ լինի մեր պատղին՝ լուսաւոր անդրադառնումի և երախտագիտութեան։

Անտարակոյս որ Արքոց Թարգմանչաց գործը ծնունդն է Ա. Գրիգորով սկսուած հարիւրամեայ երկունքին։

Գաղտնիք չեն մեր Լուսաւորիչներու հոգեկան կապերը, անոնց մտահոգութիւններն ու գործերը։

Հայաստանի ամբողջական դարձն ու քրիստոնէութեան պետականացումը 301ին տեղի ունեցան չնորհիւ Ս. Գրիգոր Լուսաւորչի:

Հայերէն զիրերուն զիւտը կատարուեցաւ 404ին, ստեղծագործ հանճարովը Ս. Մեսրոպ Մաշտոցի:

Աստուածաշունչի ոսկեղէն թարգմանութիւնը լրացաւ 435ին։ Հայ մշակոյթի ոսկեղարը ծաղկեցաւ հովանաւորութեամբը Ս. Մահակ Պարթևի։

Ուստի, Լուսաւորիչ, Սահակ և Միհուրով, ի գլուխ երեց և կրտսեր թարգմանիչներու, լուսեղէն խարիսխներն են հայ մշակոյթի տաճարին, հաստատուած Հայաստանի սրտին և հայ հոգիներուն խորը։

Անոնց կը պարտինք մեր ազգային-կրօնական ուրոյն կեանքը։

Բնական է որ հետաքրքրութիւնք զիւտնալու համար թէ ի՞նչպէս իրագործուեցան մեր պատմութեան այս երեք մհծագոյն եղելութիւնները։

Մանօթ են Ազաթանգեղոսի, Կորիւնի և Փարպեցու հրաշապատում դրուազները։

Մենք ալ մեր առաջին պատմիչներուն պէս յարգանքով կը խոնարինք Տեղական յափետականմերու, նզնողական Երկումի և ասուածային յայտնուրիթներու առջև, որոնք այնքան առատութեամբ բաժինն եղան մեր Լուսաւորիչներուն։

Բայց, ասոնց կարգին, ձեռք բերուած հրաշալի արդիւնքին մէջ կայ գործնական պարագայ մը որուն կ'ակնարկեն միւնոյն պատմիչները։

Մերա զործակցուրիւնն ու փոխադարձ սերն է ան հասարակաց օգտին համար։

Անոնց զործին ծաղկութեամբ յաւերժացումն ալ, ինչպէս փորձառութիւնը ցոյց կուտայ, կարելի կը լինի միայն փոխադարձ զործակցուրեամբ և բոլորանուէր սիրով յօդուու հայ զիրին և գրականութեան, հայկական մշակոյթին զարգացման և պահպանութեան։

Շատ իրաւամբ կ'ըսուի յաճախ։ «Մէկ ծաղկով զարուն չի զար»։ «Մէկ ձեռքով ծափ չի զարնուիր»։ «Մէկ մատով զործ չի դառնար»։ «Միութիւնը զօրութիւն է»։

Ժողովրդական այս ասութիւնները հիմուած են փորձառութեան վրայ։

Ստոյգ է որ պատմութիւնը ոսկի տակորով կ'արձանագրէ անունները մեծ դէմքերու, որոնց գործը բախտորոշ է իրենց ազգին կամ մարգկութեան համար, բայց նկատելի է որ եթէ անոնցմէ ոմանք առանձինն թողուէին, առանց մտերիմ զործակցութեան կամ բարեկամական հովանաւորութեամբը Ս. Մահակ Պարթևի։

Մեր մէջ նկարագրի մհծութիւն է Գրիգոր Պարթև, որ քաւելու համար իր հօր Անակի մեղքը կը զինուորի Տրդատին, կը խոստովանի իր լոյս հաւատքը և չի զոհեր Անահիտին, հակառակ իրեն եղած խոստումներուն և սպառնալիքին։

Մեծութիւն մըն է Սահակ Պարթև, որ հակառակ նախարարներու ճնշումին, կը նախընտրէ վտանգելի իր անձն ու զիրքը քանթէ զործակցել Վահագուհի անարժանի որդին Արտաշէսը զահնեկեց ընել ուզող և անոր տեղ պարսիկ մը նստեցնել փափաքող անխորհուրդ նախարարներուն, որպէսզի իր տարաբախտ հօտն ու հիւանդ ոչխարը զերծ մնան օտար գայլերու կատաղութենէն։

Հոկայ մըն է Հացեկացի Մաշտոց, որ պետական քարտուղարի նախանձելի զիրքը թողլով կը նուերիուի մենաւորական խոկումներու, խստակեաց վանականներ պատրաստելու և նուերիուելու թարգմանչական աշխատանքի։

Բայց, եթէ միայն այսքան լինէին Պարթեազն Գրիգորի, Սահակի և Մաշտոցի մհծութիւնները, անոնք հազիւ թէ ցոլացող աստղի մը կեանքն ու փայլը կրնային ունենաւ։ Մինչդեռ իրողութիւն է որ մէր խմացական երկնակամարին վրայ, թաւալող տարիներն ու զարերը, յաջորդող սերունդներու աչքին աւելի ևս կը բարձրացնեն անոնց իւրաքանչիւրին հմայքը, կը պայծառացնեն անոնց փայլը, կ'ընդարձակեն ու կը գեղեցկացնեն անոնց մհծութեան ծիրը։

Անոնք միշտ զիտակից եղան իրենց քահանայական կոչումին և լիովին կատարեցին իրենց պարտքը Աստուծոյ և ժողովուրդին հանդէպ։

Անոնք երրեք իրենք զիրենք տէր և իշխան չհամարեցին, անձնական հանգիստ և անցաւոր փառք չհետապնդեցին, իրենց անձերն ու զիրքը ի սպաս դրին Աստուծոյ կամքին, հայրենիքի և ազգի օգուտին:

Անոնք բարիին միայն գործակից եղան, բարին գործեցին, և ամէն բարի գործակցութիւն գնահատանքով լնգունեցին:

Անոնք այնքա՞ն խոսնարհ եղան որ իրենց կատարած բոլոր մեծ գործերը Աստուծոյ միայն վերագրեցին:

Ահա ապացոյց մըն ալ թէ անոնք որպէս մշակները Տիրոջ այգւոյն, ոչ միայն չնորհք չէին համարեր իրենց ըրածները, այլ համեստաբար կ'ըսէին.

Մառայի անպիտամի հօֆ, զոր պարտեան տոնել՝ արարաք (Ղուկ. Ժկ. 10):

Լուսաւորիչ մեծ է, որովհետեւ Աստուծոյ փառքին և ժողովուրդի փրկութեան համար չարչարակից լինելով Քրիստոսի, կրցաւ Աւետարանին լոյսը ծաւալել որքան իր խօսքին՝ նոյնքան և աւելի իր կեանքին ազդեցութեամբը:

Մահակ Պարթեա մեծ է որքան իր զիրքին և ծագումին նոյնքան և աւելի Աստուծոյ խօսքը ուղիղ մեկնելու և ժողովուրդին սիրու անոր բանալու իմաստութեամբն ու աշխատանքովը:

Մեսորապ Մաշտոց մեծ է, զանզի ինչպէս որ Պրոմեթէս երկինքէն կրակը իրը օրհնութիւն աշխարհ բերաւ, ինքն ալ և Տիրին փառքը յափշտակեց» հայոց անզիր լեզուն զիրով արձանացնելու և անզիր ժողովուրդը զիրով անմահացնելու հրաշքը գործեց:

Բայց, այս երեք լնտրեալները, որոնք իրենց կեանքին գեղեցկութեամբն ու հայրենասիրական ծառայութիւններով Հայաստանի երկնակամարին տակ Արագածին, Արարատին և Միկանին համապատասխան իմացական կատարներ են, շատ բան պիտի կորսնցնէին իրենց հմայքէն, եթէ զարդարուած չլինէին Ս. Հոգիին չնորհներով, եթէ հաւատարմութեամբ իրարու չփոխանցէին և իրենց տաղանդները չչահարկէին Աստուծոյ փառքին և հայ ժողովուրդին լուսաւորութեան համար, եթէ բարիին մէջ չզործակցէին միմեանց, եթէ իրարու, Տրդատի, Վռամշապուհի և այնքա՞ն ուրիշներու ա-

ջակցութիւնը չընդունէին և չաշխատէին միասին:

Անոնք յաջողեցան իրական մեծութեան փառքն ու անմահութեան լուսապատճեն ընդունէի, որովհետեւ զիտակցաբար իրենց անձերն ունայնացուցին, որպէսզի Աստուծով լով լիցուին և Աստուծած փառաւորուի:

Այս նպատակով անոնք զործակցեցան իրարու, Տրդատի, Վռամշապուհի և միւս բոլոր զործովներուն: Նոր աշխատանք ստեղծեցին, առաքելական իրենց զործը զարգացուցին, որպէսզի Աւետարանի լոյսը ծաւալի հայոց մէջ, որպէսզի Հայաստանէն փարատան հեթանոսութեան և տգիտութեան խաւարը, որպէսզի հայ հոգիներուն մէջ հաստատեն հայ զիրին լուսեղէն խորանը, որ հայկական մշակոյթն խոկ է իր երփներանգ ճառագայթումներով, որոնցմավ, իրը Տէրունական Մարմինի և Արեան կը հաղորդուինք Աստուծոյ, մեր հայրերուն և իրարու հոգիներուն:

Զորբորդ գարէն ի վեր կենդանի է Լուսաւորչի հաւատքը, վառ է Լուսաւորչի կանթեղը անոր համար որ Ս. Գրիգորի թափած աստուծ զիտութեան իւղին վրայ աւելցան պտղութերը Տրդատի և Վռամշապուհի քրտինքին:

Ս. Մեսրոպ՝ նմանեալ Մովսիսի, «չմիայն Արքական նոր բարձունքէ մը զիրին զիւտով հայոց բերաւ օրէնքի Տասնարաննեան նոր Ուխտի՝ Կտակարաններուն հետ, այլ լծակցելով Սահակի, Հայաստան բերաւ կենդանի Աստուծած:

Ս. Մահակ, հայացուց Մովսէսն ու մարդարէները, իսրայէլի իմաստուններուն, բանաստեղծներուն, նոր Ուխտի՝ աւետարանիներուն, Պաղսոսի, առաքելական զունդին և հայրապետներու դասին հետ միասին:

Ի՞նչպէս չխանդավառուիլ անոնցմավ Արքապետին Տիրիրի զգիր կենդանի, նեղին, Հովուել զիօս նոր Խարայէլի: (Յարական):

Ի առ այս սքանչելի արդիւնքին ո՞վ պիտի վարանի հաստատելու ստուգութիւնը Դուրեան Եղիշէ Վարդապետի խորաթափանց պատկերացումին, որով կը պարզուին Սահակ-Մեսրոպեան ստեղծագործութեան նըսպատակը և յաջողութեան բանալին:

Գաղտնին այն է որ երբեմն երկու ալ տաք տաք արցուներով իրարու նետ

լացին, հուր հուր երազներով մէկտեղ հմայեցին, սուրբ սուրբ մրմուճներով մէկտեղ աղօրեցին. եւ ինչո՞ւ այս ամենը. — որպէս զի Ասուած հայերէն խօսի, որպէսզի օսար լեզուներու — յունարէն եւ ասուերէն — խզուրշիւնէն թմրած չորս հարիւր տարիներէ ի վեր Աւետարանին ծառայոլ ժողովուրդը Ասուածոյ տաճարէն դուրս չելլէ այնպէս՝ ինչպէս իր նախնիքը կ'ենիկն Արմաւիրի սովուներուն անսառէն, սոսափիւն եւ սարսափ տաճելով իրենց նես բն ք սիրոյ երկնային ազգութ մք. որպէսզի Լուսաւորչի զաւակները հոգեկան զմայլումով ողջունէին Յալիտենականին մէկ նոր Յայտնուրիւնն ալ հայեցի բառերով ու շետերով, ու անոնց համար նորազոյն Ռւխսի մը շափ արձեկ ու նենար այն: Ալ այնունեսեւ թերեւս օսարոսի բան մը չունենար Ասուած(*):

* * *

Ասենէ մը ի գեր սփիւռքի հայերու գոյութեան սպառնացող ձուլումը նուազ վտանգաւոր չէ մեզ համար, քան առաջին դարերու հեթանոսական խաւարը, Արշակունեաց գահին անկումը, քան Հոռոմներու և Պարսիկ կլանողական ձգտութերը:

Հիմա, երբ մանաւանդ հայրենին հողին կոռուանն ալ չունինք արտասահմանի մէջ պահելու մեր ցեղային ինքնութիւնը և արժեցնելու մեր լինելութեան նպատակը, պէտք ենք աւելի սերտ սիրով գուրգուրաւ մեր հոգեւոր ժառանգութեան այն բոլոր ազգակներուն վրայ, որոնք իրը անսպառ գանձ աւանդ կը մնան մեզ Հայաստանեաց Եկեղեցիով, Հայ Գիրով և Հայկական Մշակոյթի հանքերով:

Անոնք անցեալին մէջ սնուցին մեզ կենաց հացովին ու բաժակովը, փրկեցին մեզ վերահաս մահերէ՝ վերականգնելով մեր ազգային՝ կրօնական նկարագիրն ու քաղաքակրթութիւնը:

Անոնց տիրացումն ու ստեղծագործութիւնը, ճշմարիտ մէծութիւնն ու փրկութիւնը եղան մեր փոթորկալից անցեալին և Լուսաւորիչներուն:

(*) Եղիշէ Վ. Դուրեհան, Ս. Սահակ եւ Ս. Մերոպ: Տես Գարեգին Եպոս. Տրապիդոնի Ռշխարի Լոյսին ի Հայոց, թ., Պ. Այրէս, 1939, էջ 123.

Անոնց պահպանութիւնն ու զարգացումը, մէծութիւնն ու պատիւը պէտք է լինին մեր և գալիք սկրունդներուն, քանի որ անոնցմազ կ'արժեսորուի մեր ներկան և կ'երաշչաւարուի մեր ապագան:

Բայց այս նպատակին հասնելու համար մենք ալ պարտինք մեր Լուսաւորիչներու և իմաստուն նախնիքներու հետահսութեամբ զործակցիլ իրարու, որպէսզի Աւետարանի լոյսը չողայ անստուեր, մեր տոնմէրկ կեանքը ծաղկի բարոյականով և զիտութեամբ, մէծասքանչը հնչէ յաւէտ, և մշտավառ մնան հայ մշակոյթին ջահն ու հայրենի աւանդութեանց առկայժ լապտերը, հայ տաճարին, գպրոցին և տունին մէջ:

Ասոր համար ալ մեր Լուսաւորիչներու, Ս. Գրիգորի, Մահակի, Մեսրոպի և անոնց բոլոր գործակիցներուն օրինակն ու կտակը, նպատակն ու յաջողութիւնը խրախոյս պէտք է լինին ամենուս:

Աչքի առջև ունենալով այս ամէնը, ի՞նչպէս կրնանք չետենիլ Տիրոջ սա պատռուէրին.

Մինչդեռ զլոյս ընդ ձեզ ձեռիք հաւատայեք ի՞լոյսն, զի որդիք լուսոյ ելիջիք: (Յիզէ. ԺԲ. 36):

Կենդանի հաւատքը գործքով կը պղտղարեի:

Եւ որքա՞ն շատ են ու սուրբ այն գործերը, որոնց կատարումը մեզ լոյս և լուսոյ որդիներ կը զարձնէ:

Հայ Քրիստոնեաներ, պիտի մոռնա՞ք կեանքն ու գործը Լուսաւորիչներուն: Պիտի չպահէ՞ք ազգին և չարդարացնէ՞ք ձեր քրիստոնէական կոչումը.

Եու ի լոյս աւխարհի:

Պիտի չվարի՞ք գիտութեամբն ու հաւատքովը Լուսաւորիչներուն: Վառ պիտի չպահէ՞ք ազգին լոյսը, որ հայ մշակոյթնէ, կրօնքն ու եղանակն, զիրն ու արուեստները, ամէնքն ալ ճառագայթումներն Աշխարհի լոյսին, որ լոյսն է Հայաստանի, Լոյսը Հայ Ազգի:

ԶԳՕՆ Ն. ՎՐԴ. Տէր ՅԱԿՈԲԵԱՆ

Միլան

Ա. Տ Ա Ր Ա Վ Ո Ւ Դ Ի Ն

Բարձերուն քեկնած, քենց ու տըռում,
Արտահամն անդուն
Կը մնար բանտուած օրերէ ի վեր
Վրանին ներթեւ,
Աչքն իր սեւեռուն նամբուն ամայի,
Ուրկէ մեկնեցան Սառայի վեռով
Խմայիլ, Հազար,
Խղճի խայր, կորանի,
Կը նկնէին սիրսն իր:

Արտահամն անխօս,
Կը մնար բանտուած իր վրանին տակ,
Բայց միտքն իր ովկէան
Խոկումներու լոյծ,
Ալիբներու պէս իր բռւմբը բակած,
Մեծ անապատի աւազներն ի վար՝
Կ'անէր, կը մեծնար:

Եր ձագէն նեռու բաջունի նըման՝
Սիրսն իր արիւնոս, անյոյս կը նըչար.
Ո՛վ բաղցըր անդունդ մարզոց նոզիին,
Որ կը լեցուի լոկ
Զերմ արցունիներով...:

Ո. Ա Ր Ա Վ Ո Ւ Դ Ի Ն
Ո ն կ լ ա ւ ա զ ն ե ր ո ւ .
Հ ո ր ի զ ո ն ի ն դ է մ ե ր կ ի ն ի ն է ա ն հ ո ւ ն
Հ ա յ ե լ ի կ ա խ ա ր դ ,
Ու մ ի ջ ո ց ն ի վ ա ր խ ո ր տ ա կ ո ւ ա ծ ն ա ւ է
Ճ ա մ բ ո ր դ ն յ ո զ ն ա տ ա ն չ ,
Հ ո վ ե ր է ն ք ո ւ ո ղ
Ս ա լ ա ր դ ի ն ը մ ա ն :

Ո. Ա Ր Ա Վ Ո Ւ Դ Ի Ն
Լ ե ց ու ն ձ ա յ ն ե ր ո վ շ ա զ ա յ լ ե ր ո ւ ,
Բ ա ց ու ո ղ վ ի ն մ ի ն չ պ է ս
Ո ւ ն ե ր ո ւ ն ա ն ո ն ց՝
Ո ւ ն ի ն դ դ ե ր է կ ա յ ն ա ն բ ր ո ւ է ն
Ե ր ծ ո ց ը ի ն կ ա ն կ ա ն :

Մենան անհուն աչ արխինով լեցուն
Զիրենի հալածող,
Զէր շարժէր նոյնիսկ թեր քռչունին
Ամային վերև :

Բայց արդար է Տէր,
Ե՞րբ է մնացեր որբն առանց հացի,
Եւ քռչունն անբոյն,
Երբ խաղաղ աչքով նայեր են երկնի
Կապոյշին անհուն :

Հեռուն, տա նեռուն,
Հորիզոններու վարագոյրին դէմ,
Ովասիսն ահա, քարմ ու ծփացող
Լուսաս մը ինչպէս կապոյշներու ծոց:

Յոզնած էր Հազար ու մտամոլոր,
Գոզն անապատին այդ ախորական,
Իր բովեն տրում կ'երթար իսմայիլ,
Ծառէն անջատուած
Ուս մ'ինչպէս ցամաք:

— Ո՞ւր կ'երթանի այսպէս,
Ո՞ւր կը տանիս մեզ
Աղորմած Աստուած,
Հորիզոնին դէմ նակատագրին զոց,
Քալեր եմ Քեզի, կամֆիդ անայլայլ,
Տարիներ երկար,
Երբ չէր խսկ հընար ըստուերդ որուել
Գետերուն վրայ արցունիներուս մուր.
Եւ այժմ ինկած գիրկն աւազներուն
Եւ մեծ լրուրեան,
Քեզի կը յառին անզամ մը նորէն
Աչերըս անդունդ,
Փորուած վիշտերու
Սուր դանակներով,
Քեզ միայն ունիմ իբրեւ յոյս վերջին
Տէր նախախնամող
Եւ ամենատես :

Սյսպէս կը խոկար,
Վշարուած Հազար,
Մահուան նամբուն մէջ
Մահն ափափելէն:
Զէր մշածէր ան այեւս իր վաղուան,
Ծնած էր զերի, ապրած սարաբախ,
Ըսպասելով միւս արեւին լրման,
Որ չէր ըողացած իր նոզիին խոր
Մրցուններէն վեր:

Զէր ուզեր ապրիլ,
Երբ նովիլ մահուան կ'ոլորէր այսպէս
Անգուք, անտարքեր,
Հուրենին իր ջանին
Այլեւս նըւադ:
Վերջալոյսին դէմ կեանքին իր տրոս,
Կը ըողար սակայն մուն Խմայիլի
Օրերուն անուս,
Քաղցր, անդիմադիր:
Ամէն ինչ կօրսուած կը քուէր իրեն,
Անապատին մէջն այդ անմարդապայն,
Աւազաբումբին՝ կ'ինառ խորտակուած,
Խնչպէս կը կըքի ծառն արմատախիլ
Հովերէն ուժգին,
Խմայիլ կուլար՝ փարած մօր կուրծին:
Ցեսոյ զրկախառն,
Ըսին իրարու մայր ու երեխան,
Մօս է մեր վախճանն,
Փառք տանի Ասուծոյ
Ու քող Ան ընէ դատաստանը մեր:

Չորցած էր արցունն անոնց բիբերուն,
Խմայիլ կոքնած մօր բազուկներուն
Կը մընար ըրւար,
Հօսէն անջատուած գառնուկի նըման:

Սառած կամար էր
Երկինն անայլայլ,
Աւազներուն դէմ:

Եղրշին մը զիրենից արքցուց յանկարծ
Թմբիրէն մահուան,
Երենց հովն ի վեր մուրին մէջ կարող
Շողի մը նըման,
Խաղաղ, ժրադաղէմ
Հրեսակը տեսն :

Կեանիքը պարզին է Ս.սուծոյ, Հազա՛ր,
Ովկիանն ի՞նչ կ'արժէ
Մօժիկը դրուած գուրին անսահման
Սիրոյն Ս.սուծոյ,
Մարդոց ոխին դէմ,
Արեւը ինչպէս ամպերուն վերեւ
Թեւն իր երկարող.
Եւ արեւն Ս.նոր բաղց է եւ առաս,
Վրան արդարին ու մեղաւորին,
Վրան մարդերու,
Ս.շխարհին բըսուառ :

Ովասիսն ահա նորիզնին դէմ,
Իբրև վերջակէտ բափառումին ձեր,
Ուր նոգեզուարը
Ծառ, ծաղիկ, կանաչ,
Արեւին ներեւն կը բանան ժըպիս,
Ուր նողն յոյզերով զիտէ սարսուալ,
Եւ ջուրեւն անուս նէֆեաքներ ունին
Երենց ըրբներուն,
Մինչ օդն առտուան զինի մը ինչպէս
Հոգին անուսող :

Հազար՝ արքցած երազէ մ'անհուն,
Ոչինչ կը տեսնէր
Եր ուրջն ու նեռուն,
Մեկնած էր հրեսակ,
Հորիզոնին դէմ ովասիսն աղուոր,
Ս.նոնց նայուածին՝
Կը բաղցրանար լուռ :

ԵՊ.ԻՎ.Ա.ՐԴ

ԽԱՆՈՒ. — Հայուած մը Եղիկարդի պատրաստաթեան մէջ եղող «Ա.Ա.ՐԱՐ» խորագրով հատուէն :

Պ Ե Ս Տ Ե Վ Ե Վ Ե Վ

Aimez Ce que jamais on ne verra deux fois

A. de Vigny

Վ Ա Ր Ա Կ Ա Խ Ա Խ

Կը սիրեմ ես կեանն ու մարդիկն եւ ամէն քան,
Զի անփոփոխ ոչինչ կըրենայ երկու անգամ
Մարդը տեսնել . . . Զի ամէն ինչ ձեւ ու երանց
Կը փոխէ յար. ու կը մընայ մեզի պատրան:

Մինչ ես կ'ուզեմ պանել պատկերը մարդեռուն,
Հոգիիս մէջ իր յիշատակ մը սեւեռուն.
Քայց կը փոխէ յիշատակն ալ իր ձեւը միւս.
Եւ կը փոխուին երազ ու սէր, կարօս ու վիշ:

Եւ կը փոխուին մեր ուրշն ամէն իր ու անհաս,
Լեռ ու հովիս, դաւս եւ անտառ եւ անապաս,
Շով ու ծովափ, խուր ու խարակ, ամպ ու երկին,
Ծեր ու մանուկ ու պարմանի եւ այր ու կին:

Զը կայ քան մը որ մընայ նոյնը բացարձակ,
Ունկրինելի է ամէն ինչ արեւուն տակ,
Ժամանակին մէջ, միջոցին մէջ անսահման
Ոչինչ է նոյն, յաւիտեանէ մինչ յաւիտեան:

Մ. ՄՈ.ՆՈՒԿԵԱՆ

Ա Տ Վ Ա Ն Ա Յ Ե Վ

Ծառերն Ա.ունի՝
Տե՛ս, կը դողդոչեն
Հովին նարուածէն:

Նըկուն նետահար՝
Կուրծքն իրենց կարկամ
Կ'ըլլայ ուժաքամ:

Հերարափ, թեւաս,
Կ'ողբան անընդհան
Ոյժն ու գեղն անցեալ:

Նիկոսիա,

Դազադի՝ ուսերուն,
Շուրբին՝ երգ քաղման
Թափօրն է մահուան:

Համակերայ, նըլու,
Քընացէ՛ք, բոյեր,
Նըսէմ նինչը ձեր:

Միւս երազելո՛վ
Կենարար Գարնան
Խոսումն անխափան:

Ն. Պ. ԶԱՓՈՏՍՈՐԵԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՍԱԿԱԽԱԴԵՊ ԲԱՑԱՐՄՈՏՆԵՐ^(*)

Մեր լեզուին մէջ այժմ կը գործածաւուին բազմաթիւ բայեր, որոնց արմատները երբեք չեն կիրարկուած զրաւորապէս, կամ այնքան հազուազէպ եղած է անոնց կիրառութիւնը, որ չատեր անտեղեակ մնացած են բնականաբար:

Բայակերտութեան պահուն արմատ բառին պարունակած ի կամ ու ձայնաւորաները կը կորսուին միշտ։ Սակայն միշտն անոնք չեն որ կ'իյնան, երբեմն կորսուած կը տեսնենք ուրիշ ձայնաւորներ ալ. ինչպէս, ա, ե, ո, մանաւանդ աշխարհաբարի մէջ։ Հետեաբար գժուարութիւն կը ծագի ճշդելու թէ ի՞նչ է բային մէջէն պակսող ձայնաւորը։

Ոժանք, փորձելով ենթադրաբար վերականգնել կորսուած, եւ կամ այնպէս կարծուած արմատներ, ինկած են մոլորանքի մէջ։ Սակաւ չեն նաև գրադներ, որոնք նոր բարզութիւններ կը կերտեն անգոյ կամ թիւր արմատներով։

Կորսուած արմատները գտնելու ապահովագոյն կերպն էր, փնտոել զանոնք բարդ կամ նախած անց բառերու վերջաւորութեան մէջ, ուր անոնք իրենց հարազատ ձեռվ կը ներկայանան՝ երբ գործածուած են առանց հոլովուելու։ Ի հարկէ այսպիսի նպաստաւոր հանգամանքներ ամէն արմատի համար չեն պատահիր, բայց զօնէ գտնուածները քննել և օգտագործել կարելի էր։

Մենք անօգուտ չհամարեցինք հաւաքել այդ կարգի արմատներին շարք մը, զոր կու տանք ստորև, բայերու այրուենական կարգով։ Ներկայացուած իւրաքանչիւր արմատի զոյութիւնը ապացուցուած է ընդհանրապէս մէկ կամ աւելի բարդ կամ անցհաւ բառերով՝ կիրարկուած մին հին մատենագրութեան մէջ։

Բրդել — բուրդ — ջարդուրուրդ։
Բրել — բիր — զետնաբիր, երկրաբիր,
հողաբիր։
Դարտկել — դատարկել — դատարկ։
Դղրդել — դղորդ — (Դ. Փարակեցի)։
Դրդել — դրուդ — (Յոզէ. Երզնկացի)։
Զրկել — զիրկ աւելի հին կ'երելի քան
զուրկ — անզիրկ, զգայազիրկ, հայրենազիրկ — բանազուրկ, հայրենազուրկ։

Թժրիլ — թժմուր — (Վարդան Վրդ.)։ —
Սակայն ըստ բազմաց թժմրիլի արմատն է թժրիր, որմէ թժմրիլ, և բի անկումով թժրիլ։ Աստուածաշունչի մէջ թժրրիլ և թժբրութիւն ձեւելը միայն կը տեսնուին։

Թըզել — թուրջ — (Դիրք Վաստակոց)։ —
Կասկածելի են թըզիջ, անթըզիջ։
Լմբել — լում — զիւրալում (թըզմ. Բարսղի կեսարացւոյ)։

Լուտալ — լոյտ — (թըզմ. Փիլոնի)։
Խամբիլ — խամուր — անխամուր, արագախամուր, զիւրախամուր, վաղախամուր։

Խզել — խուզ — անխուզ, ծայրախուզ, կենախուզ։

Խլրտիլ — խլիրտ — անխլիրտ — (թըզմ. Փիլոնի)։

Խմել — խում — անխում — (Նորագիւտ Մնացորդաց, Ա. Գիրք, իդ., 29)։

Խրել — խիր — աւազախիր — (Յոզհաննէս Պատմաբան)։

Խրտչիլ — խիրտ — խրտխիրտ։
Ծծել — ծուծ — թարախածուծ, կաթնածուծ, կովածուծ, մեղրածուծ, ուղղածուծ։

Կտուել — կտուտ։ — Ալ է կտիտ։
Կորել — կոռուր — (Անանիս Շիրակացի)։
— Արմատակտուր, հատակտուր (Յոզհաննէս Պատմաբան), միջակտուր (Մ.

(*) Աբտասպուած հասկէն (1938 էջ 110), կառեար յաւելումերուլ։

Սորենացի, եւայլն), մօտակառը (Գաղտ. Ե.): Բացակառը, երկաւկառը, ծայրակառը, կարճակառը, կիսակառը, չըջակառը: — կառակածելի են կտիր, հատուկափիր:

Կրծել — կուրծ — արծաթակուրծ, արշատակուրծ, կաշառակուրծ:

Կրկտել — կրկիտ աւելի՝ քան կրկուտ — ականջկրկիտ, բանակրկիտ, գիրեզմանակրկիտ, մանրակրկիտ:

Կրտ: — կրտել — կրտճ — կը թուի բնաձայն բառ:

Կքիր — Այս բային արմատը քանի մը գաւառական բարբառներու մէջ միայն կ'երեխ կույ կամ կիմ ձևերով: — կիք = Ամուր, պինդ, ուրիմ կքել = Ամուր քաշել չուանը: Հնագոյն բառարան մը սակայն, 1306 թուին գրուած (Զեռ. Ա. Յ. Թ. 2481 էջ 49) ունի Կուք = Առնարհ, որ նախընտրելի է:

Հնել — հունչ և ո'չ հինչ — բազմահունչ — (թրգմ. Սերեբրանոսի):

Հրել — տես իրել:

Հզուալ — ձզեռատ — (Բժշկաբան Մինի թարայ):

Ճմել — ճմեկել — ճմուռ:

Միորճել — միսիրճ — (թրգմ. Ռոկեբրունի):

Մկրտել = միորճել:

Մզել — մուզ — ճակատամուզ (Փառատոս), ջրմուզ, սազմամուզ:

Մշտել — մուչտ — (Յովհ. Երզնկացի):

Մուել — մուռ — լուռմուռ:

Մսիսել — միսիս (Տփղիսի բարբառ):

Մրցել — մուրց — անմուրց, մուրցացի: — վերջին բառին մէջ ու բացառաբար չէ կորսուած:

Մլրտել = Խլրտել:

Շպտիլ — հապտիլ, հտապտել — հտափիտ:

Շփել — չուփ — ամպաչուփ — (Ազանագեղոս), ոտնաչուփ:

Պառկիլ — պառիկ = կռնակ (Զարսանագ):

Պճնել — պճին (Ք) և ո'չ պճն: — Հայէբզուն լոկ բազաձայններով կազմուած արմատ չունի:

Պտոել — պտիռ — աղբապտիռ — (Եերսէկս կամբընացի):

Պտաիլ — [պտուտիլ] — պտույտ:

Պրծիլ — պուրծ — մազապուրծ (Յովհ. Երդնկացի), անձնապուրծ:

Ջնջել — ջինջ՝ ընդհանրապէս: — արմատաջինջ, բնաջինջ, գժուարաջինջ, համայնաջինջ, համաջինջ, սաստկաջինջ, սրբաջինջ: — կան նաև անջունջ, համաջունջ, սրբաջունջ:

Սագրել — սագիր — չարառագիր:

Սիմել — սիդմել — սեդմ:

Սմքել — ցամքել — ցամքաք:

Վասնել — վատին — վայրավատին (Եերիանոս, ևային):

Ցնգիլ — ցնւնդ — բազմացունդ (Ազանագեղոս):

Ցտել — ցիտ — գանակացիտ:

Փաթթել — փաթաթել — փաթաթ:

Փիրել — փուխիր — (Դիրք Վաստակոց), — Դիւրափուխիր: — կասկածելի դիւրափիխուր:

Փնտոել = պտուել:

Փչել — փուչ — դիւրափուչ (Թ. Արծրունի):

Բչել — քիչ — կը թուի բնաձայն բառ:

Բազմաթիւ բայեր կան, որոնց արմատներուն ճշգումը չէ կատարուած տակաւին, կամ եթէ կատարուած է, երեւան բերուած արմատները ցարդ մնացած են մասնագէտներու սեփականութիւն և չեն ամփոփուած հայ լիզուի զանձարաններուն մէջ:

Ն. ԵՊՈ. ԾՐՎԱԿԱՆ



ԳԻԼԳԱՄԵԴԻ ԴԻՔԱԶՆԵՐԳՈՒԹԻՒՆԸ

ՍԻՒՆԱԿ ՀԻՆԳԵՐՈՐԴ

181. — *b*՝ Գիլգամէջ, կ'ուզեմ տեսնել
ան որուն մասին կը խօսին.
182. — որուն անունով երկրներն են շա-
րունակաբար լի.
183. — նուաճեմ պիտի զինքը մայրիներու
անտառին մէջ.
184. — (*թէ*) որքա՞ն հզօր է շառաւիղն
Ուրուկի,
185. — պիտի երկրին լսել տամ.
186. — գնեմ պիտի ձեռաքս, ու մայրիները
կտրեմ.
187. — պիտի ինձ համար, յաւերժական ա-
նուն մը կերտեմ:
188. — երէցները քառուզեան Ուրուկի,
189. — պատասխանեցին Գիլգամէջին:
190. — «Պարմա՞ն ես զու՝ ո՞վ Գիլգամէջ,
քու սիրոն է քեզ տարած.
191. — չես զիտեր զուն այն ինչ որ կ'ու-
զես ընել.
192. — կը լսենք որ Թուզավայի երեսյթն
է տարբե՞ր.
193. — ո՞վ է ան, որ անոր զէնքերուն
[կարենայ ընդդիմանալ]
194. — Տառը հազար [փարսախ] (հեռաւո-
րութեամբ) կը տարածուի (?) ան-
տառը.
195. — ո՞վ է ան, [որ պիտի] իջ[նէր] ա-
նոր խորը.
196. — Բուզավան՝ իր զոչիւնն է ջրհեղեղ
-փոթորիկը,
197. — բերանն է հուը, շունչը՝ մահ:
198. — Ինչո՞ւ կը փափաքիս (արդարե)
այս բանը ընել:
199. — Անհաւասար մարտ մըն է
Թուզավայ:
200. — Երը Գիլգամէջ լսեց ճառն իր խոր-
հրատառւներուն,
201. — Նայեցաւ [իր] բարե[կամ]ին, ու
ժպանեցաւ:
202. — Հիմա, բարեկամ. ինչպէս [որ
կ'ըսեմ],
203. — եթէ իրմէ կը վախնամ
204. — [կ'ուզեմ] եր[թալ(?)]
- բնազրային լրատ մը կ'ընդմիջէ երկու
- բարեկամներուն՝ Գիլգամէջին և կնկիդուն
միջն երկարաձգուող մտերմիկ խօսակցուա-
թիւնը. բնազրային երբ հասկնալի կը դառ-
նայ, երէցները կը տեղացնեն իրենց սրաւա-
րուի մաղթանքներուն յորձանքը Գիլգա-
մէջին վրայ:
212. — «Թող քու աստուածը [պաշտպանէ]
քեզ.
213. — [թօղ առաջնորդէ քեզ] [ապա]հո-
վարար (զէպի առւն՝ վերադարձի)
ճամբուն վրայ.
214. — [վերադարձնէ քեզ] քարափին Ու-
րու [կիւ]:
215. — Գիլգամէջ երկրպազեց [Շամաշի
առաջ, բարձրացնուց իր ձեռքերը՝
ըսելով]:
216. — «Խօսքերը զորս ըսին
217. — Կ'երթամ, ո՞վ Շամաշ, [քեզի]
ձեռքեր[ս] [կ'երկարեմ],
218. — յետ այսու, անվտանգ մնայ թող
[իմ] հոգին.
219. — վերադարձուր զիս, քարափին [Ու-
րուկի],
220. — տարածէ (զիր) [իմ վրայ] (քու)
հովանինս:
221. — Գիլգամէջ կանչեց [իր բարեկամը],
222. — [ու քննեց] անոր զուշակութիւնը:

ՍԻՒՆԱԿ ՎԵՑԵՐՈՐԴ

223. — Արտասուրքները [կը] հո[սին] Գիլ-
գամէջի [աչքերէն]:
230. — « . . . ուզի մը, զոր չեմ երբէք
թե[ւա]կոխած»:
231. — . . . չեմ զիտեր,
232. — . . . ոզի առօղջ պիտի մնամ,
233. — . . . զուարթ սրտով.
234. —
235. — [Պիտի քեզ համար] զահ մը [հաս-
տառեմ]:
236. — [Բերին(?)] իր հանդերձանքը՝
237. — մէծ [թու] բեր,
238. — [աղեղ] ու կապարձ,
239. — զրին (իր) ձեռքերուն [մէջ]:
240. — [Ան]աւ կացիները,
241. — . . . իր կապարձը,
242. — Անշանի(54) [աղեղը].

(54) Այժմու արեւմտեան Պարսկաստանի, Հին-
եւամի մէջ զանուող հարաւային գաւառ մը:

243. — [գրաւ իր թու]րը իր զօտիին մէջ. 270. — [զո]վ ջուր մատուցանէ Շամաշին. 244. — . . . (ու) քալեցին. 271. — [միշտ] ի մտի ունեցիր կուգալ-
րանդանց. 272. — [ինկ]իղուն բացաւ իր բերանը ու
ըսաւ Քիլլամէցին. 273. — եւ [քու] ուղեւորու-
թեան. 274. — [մող չ]զար[հուրի] քու սիրոք.
ինձի նայէ. 275. — . . գիտեմ իր բնակավայրը. 276. — [ճանապարհը] զոր Քուվավան սո-
վոր է կորել. 277. — Կամայակ' . . . անոնց 278-281. — (լրատ): 282. — [Բուվավան՝ որուն անունը] կը
լեցնէ [չարու]նակաբար [երկիրը]. 283. — [ինկիղուն հետ] որ իմ հետ կ'եր-
թայ. 284. — [պիտի հետեւիմ] ձեր [խօս]քերուն
հանոյքով: 285. — [Երեցները երբ լոեցին] իր այս
ճառը. 286. — Դրին դիւցազնը ճամբու: 287. — «Կնա, Գիլլամէց . . . [լու ըլլայ
թող]: 288. — քու աստուածը քալէ թող [քու
կողքին]: 289. — թող ան ցուցնէ [քու աչքերուն],
[ինչ որ քու բերանն է արտաբերած].
- Հին բարելական բնագիրը կ'ընդհատուի
երեք ծայրատուած տողերէ վերջ. զրոյցը
առաջն կը շարունակուի ասուբական բնա-
գրին մէջ, իր կրկնութիւններով հին բարե-
լական բնագրին, տող 147էն սկսեալ:
- Ա Ս Ո Ւ Ր Ա Կ Ա Ն Բ Ն Ա Գ Ի Բ Լ
- Ս Ի Խ Ն Ա Կ Ա Ռ Ա Զ Է Ւ
1. — [Երեցները բացին իրենց բերանը ու
ըսին Քիլլամէցին]: 2. — «Գիլլամէց, [մի] ապաւինիր [քու]
համակ զօրու[թեան]. 3. — թող քու . . . յազենան. . . . 4. — Ան որ կ'երթայ առջեւն, կ'ազատէ
լնկիրը. 5. — ան որ զիտէ ուղին, կը թեւարկէ
իր բարեկամը. 6. — թող կնկիղուն քալէ քու առջեւն.

(55) [i-na]-ka shu-wu-ra-ma, անհ'ս Zeitschrift für Assyriologie, 1934, XLII, էջ 110. Pritchard, Ancient . . . էջ 80.

(56) Hal-lip-shu, անհ'ս վերայիշեալ հանդէս: էջ 111. Այսնը . . . Ancient, էջ 80.

(57) Պահապան աստուածը Գիլլամէցի:

7. — զիտէ ան ճահապարհը մայրիներու անտառին.
8. — տեսած է ան մարտ, եփաւն է ան կոռու մէջ.
9. — թող էնկիզուն պաշտպանէ բարեկամը, թեւարկէ ընկերը.
10. — փասերուն վրայէն, թող կրէ անոր մարմինը.
11. — մեր հաւաքոյթին մէջ փոյթ տածեցինք քու հանդէպ, ո՞վ թագաւոր.
12. — փոխազարձարար, զուն ալ մեզի ուշազրութիւն ընծայէ, ո՞վ թագաւոր.
13. — Գիլգամէշ բացաւ իր բերանը, ու խօսեցաւ.
14. — ըսկոզ էնկիզութիւն:
15. — «Ե՛կ, բարեկամ, երթանք եզակ մազի⁽⁵⁸⁾ (տաճարը),
16. — մեծ զշխոյ՝ նինոսունի առաջ:
17. — նինոսուն իմաստունը, որ հմուտ է ամէն զիտութեան,
18. — պիտի ան խոհեմ քայլեր յանձնաբարէ մեր ոտքերուն:
19. — իրարու ձեռքէն բռնելով,
20. — Գիլգամէշն ու էնկիզուն զացին եղալմազ,
21. — նինոսունի առաջ՝ մեծ զշխոյն:
22. — Գիլգամէշ առաջ անցաւ ու մտաւ [տաճարը]:
23. — «Ո՛վ նինոսուն, պիտի անվեհերօրքն⁽⁵⁹⁾ զործեմ
24. — Հեռաւոր ուղեւորութիւն մէ՝ զէ[պի Քումբարան].
25. — անորոշ մ[ար]տ մը [զիմազլաւեմ պիտի].
26. — [ուզի մը] զոր չեմ զի[տեր կարեմ պիտի].
27. — [մինչեւ այն օրը, որ երթամ և զերազանամ].
28. — [մինչեւ որ հասնիմ մայրիներու անտառը].
29. — [մինչեւ որ սպաննեմ ահեղ Քումբարան].
30. — [ու փհացնեմ երկրէն ամէն չարիք որոնք խորչելի են Շամաշին]
31. — [հայցէ Շամաշին ինծի համար] . . .
(Կոտրուածք)

ՍԻՒՆԱԿ ԵՐԿՐՈՐԴ

1. — [Եինուն] մտաւ [իր սենեակը].
2. —
3. — [հազուեցաւ զեսաս մը] որ կը յարմարի իր մատ[թի]նին.
4. — [զրաւ լանջականը] որ կը պատշաճի իր կուրծքին.
5. — զրաւ իր խոյրը:
6. — զետինը
7. — մա[զլցաւ] ան
բարձրացաւ տանիք.
8. — ելու խունկ մատուցանեց Շամաշին.
9. — զետեղեց ըն[ձան ու] բարձրացուց իր ձեռքերը Շամաշի առաջ:
10. — «Ինչո՞ւ, Գիլգամէշը ինծի իրքն զա[ւակ] տալով, անհանդարս ուրատվով մ'օժուեցիր զինքը,
11. — ու այժմ յուզեցիր զուն զինքը, ու ան կ'երթայ՝
12. — հեռաւոր ուղեւորութեան մը, Քումբարային վայրը,
13. — զիմազլաւելու մարտ մը, զոր ան չեւ զիտեր.
14. — կորել ուզի մ'անորոշ.
15. — մինչեւ այն օրը որ երթայ և զերազանայ.
16. — մինչեւ որ մայրիներու անտառը հասնի.
17. — մինչեւ որ սպաննէ կատազի Քումբարան,
18. — ու չնչէ երկրէն ամէն չարիք՝ որոնցմէ կը զարցիս զուն.
19. — այն օրը որ զուն
20. — . . . թող Ալան՝ (քու) ամուսինը, յիշեցնէ քեզ
21. — [յանձնաբարէ] զինքը զիշերուայ գէտերուն:
- (մեծ լրատ մը)

ՍԻՒՆԱԿ ԶՈՐԾՈՐԴ

15. — Մարեց ան⁽⁶⁰⁾ խունկը
16. — կանչեց ան էնկիզուն, ու հազորդեց
[անոր՝ իր] պատզամը:

(60) Գիլգամէշի մայրը:

⁽⁵⁸⁾ «Ե՛մ պալատ» Հայուակող:⁽⁵⁹⁾ Ag.-da-shir, ան՛ս Զետշր ֆոր Աստրոլոգի, 1934, XLII, էջ 111. Յան Ջեմս Բ. Պրիչարդ, Ancient Near Eastern Texts . . . էջ 81:

17. — «Հզօ՞ր ինկիդու, դուն (որ) չես
պառւղը իմ արքանդին,
18. — որդեգրեցի(61)(?) քեզ հիմա,
19. — Գիլգամէջի նուէրներով(62),
20. — Քրմու հիները, մեհենապաները,
ուխտելները(63):
21. — . . . զետեղեց ինկիդուի զզին չուրջ:
22. — Քրմու հիները առին [ինկիդուն իրենց
չետ]:
23. — ու ասուածներու զուստրերը մեծ-
ցու[զին զինքը]:
24. — Ես ևմ ինկիդուն
25. — ինկիդուն . . . Գիլգամէջը
26-27. —
28. — մին[չե որ եր]թայ (և) զ[երազառ-
նայ], մինչե որ հասնի մայրիներու
ան[տառը].

ՍԻՒՆԱԿ ՎԵՑԵՐՈՐԴ

8. — «Թող [ինկիդուն] թիււարէք բարե-
կամը, պաշտպանէ ընկերը].
9. — փոսերուն զրայէն. [փոխադրէ թող
անոր մարմինը].
10. — մեր հաւաքոյթին մէջ, [փոյթ տա-
ծեցինք քու հանդէպ, ո՞վ արքայ].
11. — փոխադրձաբար, [մեզի ուշագրու-
թիւն ընծալայէ] ո՞վ թազաւորյա:.
12. — ինկիդուն բացաւ իր բերանը [ու
խօսեցաւ]
13. — ըսելով [Գիլգամէջին]:
14. — օթարեկամ, զար[ձիր
15. — ուզի մը ոչ

(61) *Sb'* Զետիքա 1934. XLII, էջ 112. Ա. Heidel, The Gilgamesh Epic and Old Testament Parallels, Chicago, Illinois, 1946, էջ 42.

(62) *Sb'* զերոյիշեալ աղբիւրը, նոյն էջը, նոյնպէս, Albert Schott, Das Gilgamesh-Epos, Leipzig, 1934, էջ 33.

(63) Բարեւական տաճարի նուիրապետութեան
պատկանող զանազան դասու քրմու հիները.

ՏԱԽՏԱԿ ԶՈՐՇՈՐԴ

Դժբախտաբար, կը պակսին առաջին
չորս սիւնակները. այս լրատը հաւանաբար
պարունակած ըլլալ կը թուի շահեկան նկա-
րով բականը մայրիներու անտառին ճակա-
տագրական ուղեւորութեան, որուն մասին
կ'ակնարկէ կանխող սիւնակի վերջաւորու-
թիւնը: Ուրուկէն արտահողուած բեկոր
մը, յատկանշական զուզահեռական մը կը
պարզէ որոշ չափով այդ կորոււած երթի-
զրոյցին, հրատարակուած A. Falkensteinի
կողմէ, Literarische Keilschrifttexte aus Uruk,
Berlin, 1931, թիւ 39:

ՍԻՒՆԱԿ ԱՌԱՋԻՆ

1. — [Բառն] փարսախէ զերջ, կտրեցին՝
(կերան) պատառ մը:
2. — [երի] սուն (յաւելոււած ական) փար-
սախէ [զերջ] կանգ առին զիշերուայ
համար:
3. — [Յիսուն փար]սախ քալեցին ամբողջ
օրը:
4. — [Մէկ ամ] սուայ և տասնըհինգ օր-
ուայ [ուզին] կտրեցին(?) երեք օրէն:
5. — [Շամաշի առաջ, հոր] մը փարեցին:

ՍԻՒՆԱԿ ԵՐԿՐՈՐԴ

1. — Քօան փարսախէ զերջ կտրեցին]
(կերան) [պատառ մը:
2. — Երեսուն (յաւելոււած ական) փարսա-
խէ զերջ, [կանգ առին զիշերուան
համար]:
3. — Յիսուն փարսախ քալեցին ամբողջ
օրը:
4. — Մէկ ամսուայ [և տասնըհինգ օր-
ուայ] ուզին [կտրեցին(?) երեք օրէն]:
(կոտրուած ք)

ԱՆՈՒՃԱԼԱՆ ԱՐԴ. ԶԴՋԱՆԵԱԼՆ

(Շարունակիլի՛ 9)

ՊԱՏՄԱ-ԲՈՒՅՈՒԹՅԱԿԵՐ

ՊԱՊ ԱՐԵԱԿՈՒՆԻ

Դ Ա Պ Ո Ւ Խ Ա .

ՇԱՄՈՒՀ Բ .

•

1. ԷՆԴԱՎԱՆՈՒՄ ԱԿՆԱԲԿ

Հայր և որդի: Արշակ և Պապ:

Որդին կը յաջորդէ հօրը Հայաստանի գահին վրայ:

Երկուքն ալ անհկուն մարտնչողներ վիմխարի: Հակառակորդներու դէմ, թէ արտաքին և թէ ներքին ճականներուն:

Ազշեցուցիչ նմանութիւններ երկուքին ալ թագաւորական գործունէութիւնը կը բնորոշին:

Զոյգ ծանրակշիռ մտահոգութիւններ երկուքն ալ կը չարչարին անդադար իրենց իշխանութեան բոլոր օրերուն:

Առաջին: Հզօր և մէկզմէկու կատաղի սխերիմ երկու զրացի կայսրութիւններու — Պարսկական և Հռոմէական — սաղրանքներու ցանցին մէջ ինկած, պետական ինչպիսի⁶ արտաքին քաղաքականութիւն մը հարկ է իւրացնել և վարել, որ եթէ Հայաստանի բախտին վերջ ի վերջոյն նպաստաւոր իսկ չհանդիսանայ, զոնէ նուազագոյն աստիճանի իջեցնէ անխուսափելի վրանգը:

Երկրորդ: Հայաստանի նախարարական աւագանիին և կաթողիկոսական իշխանութեան հանդէպ ի՞նչ քաղաքականութիւն որդեզրել, որպէսզի Արշակունի հնագարեան գահին հետզհետէ քայլքայուղ հեղինակութիւնը վերստին իր առաջուան անկապտելի զորութեան տիրանայ:

Հայր և որդի:

Երկուքն ալ, զեռ պատանի, իւրաքանչիւրը իր կարգին, օտար թագաւորէ մը կը ստանայ իր թագը: Հայրը կրցաւ զայն պահել մօտաւորապէս երեսուն տարի: Որդին՝ հազիւ եօթ տարի:

Երկուքն ալ կը փակին իրենց փո-

թօրկալի կեանքին զիրքը եղերական վախճանով: Վախճան՝ որ ոչ մէկ ուրիշ Արշակունի արքայի վիճակուեցաւ: Հայրը կը ստանայ սորերպական հարու ածը Պարսկականի թագաւորէն, օգնութեամբ սխերիմ հայ պարսկական նախարարներու: Որդին՝ ահա կանաչ վերջակէտը կ'ընդունի Հոռոմէական կայսրէն, դաւադիր օժանդակութեամբ հայ թիւղանգաստէր նախարարներու:

Պապ թագաւորի անձը և գործունէութիւնը հասկնալու համար, անհրաժեշտ է ծանօթանալ իր հօր չըջանի անցքերուն և անձերուն:

Անկարելի է զրել Հայաստանի քաղաքական պատմութիւնը առանց հանգամանորէն անզրագառնալու հզօր զրացիներու մշակած քաղաքականութեան և փոխարարերութիւններուն: Այս առաւելապէս ճիշտ է մահաւանդ Պորորդ զարու պարագային:

Իւր աշխարհագրական զիրքին պատճառաւ հայ ժողովուրդին հայրենիքը, երկու հազար տարուայ պատմութեան ընթացքին, սկսած Մեծն Տիգրանի մահէն մինչև մեր օրերը, ենթարկուած մնաց իւրեամարտ զրացիներու արիւնլուայ մըրցակցութեան պատճառած սարսափներուն: Անմեղապարտ կռուախինձոր մը, որ իր իսկ տան մէջ ազատ չի կրնար չնչել, և կամայ ակամայ թոյլ պէտք է տայ թշնամիքանակներուն իր սահմանները սանակուինլու և իր զաւառները աւրշտկելու:

Աւ այս զրացի պետութիւնները, բացի կովկասեան ազգերէն, միշտ ալ աւելի զօրեղ հանգիսացան քան Հայաստանը:

Ահա Մեծն Տիգրանի մահուան յաջորդող տարիներուն մեզ կը զիմագրաւէ հայ քաղաքական ճակատագրի այս ողբերգական կրկէսին առաջին մրցորդ զոյզը: Պարթևաստան և Հռոմ: Այս կը տեսէ զրիթէ երեք հարիւր տարի: Յեսոյ Ստանիան Պարսկաստան և Բիւղանդիսն, չորս հարիւր տարի: Ապա, Բիւղանդիսն և Մահմետական իշխանութիւններ, Սրար, Անձուկ, Մանկու, Թիւրք, զրիթէ եօթ հարիւր տարի: Եւ վերջապէս, Թիւրքիա, Պարսկաստան, յեսոյ Ռուսիա, մինչև մեր օրերը:

Ի՞նչպէս կրնաս Հայ ժողովուրդի քաղաքական պատմութիւնը զրել առանց այս արտաքին անխուսափելի պարտազրանքի

դարաւոր և այլազան ծալքերուն ծանօթաւ նալու:

Կրնանք որոշապէս ըսել թէ բազմաշարիան այդ յամա մրցակցութեան ամենան աւելի ճգնաժամային գործօն ըրջանը եղաւ Զորբորդ գարը, մանաւանդ Արշակ և Պապ թագաւորներու իշխանութեան տարիներուն: Այնքան կատաղի, որ Պապի մահէն հազիւ տաս տարի անցած, երկու հակամարտ պետութիւններ հայկական առեղծուածը լուծելու ուրիշ կերպ չեն գտներ բացի Հայաստանը բաժնելէ երկու կայսրութիւններու միջն:

Այս բաժնումն իսկ հեռու պիտի ըլլար երկարատես խողազութեան մը գրաւականը ըլլալէ զալիք 250 տարիներու ընթացքին՝ յաշս Բիւզանդական և Պարսիկ տէրութեանց: Մակայն այդ դուրս կը մնայ մեր այս գործի առաջադրած ժամանակաշրջանէն:

Զորբորդ գարուն, Հայաստանի մէջ և շուրջ կատարուող յուղումնալի տրամին դերակատարներէն, հայ և օտարազգի, ամենէն կարեորը, չըսելու համար ահարկուն է Շապուհ Բ. Պարսկաստանի թագաւորը:

Երբ կը դիտենք Հայաստանի և Մերձաւոր Արևելքի տարածուն և խոնուած թատերաբեմին վրայ եկող գացող գործիշները, ինչպէս, Արշակ, Պապ, Ներսէս Կաթողիկոս, Փառանձեմ թագուհի, Անդովկի Սրբնի, Արշաւիր Կամուրաբական, Վասակ և Մուշեղ Մամիկոնեաններ, Մերուժան Արծունի, Կոստանդիոս Կայսր, Յուլիանոս Կայսր, Յովիանոս Կայսր, Վաղէս Կայսր, Տերենտիոս Կամս, Տրայանոս զօրավար, Բարսեղ Կեսարացի, ասոնցմէ և ո՞չ մէկը այնքան երկար մեր ուշագրութիւնը կը գրաւէ և մեր մտահոգ խորհրդածութեան առարկան կ'ըլլայ որքան Շապուհ Բ., ամենամեծը Մասանեան քսանութ արքաներուն, բացի Խոսրով Անուշերուանէն:

Մա ա՛լ աւելի երկար ապրեցաւ քան միւսները: Բոլոր կարեսոր գերակատարները մին միւսին ետեւէ մեռան, և վերջ ի վերջոյ Շապուհի կատաղի անհատականութիւնը տիրապետեց բեմին:

Ան ժամանակակիցը եղաւ ինը Հռոմէական կայսրերու, Գալլերիոս, Կոստանդիոս, Կոստանդիոս, Յուլիանոս, Յովիանոս,

Վաղենատիանոս Ա., Վաղէս, Գրատիանոս, և Վաղենատիանոս Բ.: Իսկ իր օրով Հայաստանի Արշակունի գահը յաջորդաբար զրաւեցին լինեն Տրդատ, Խոսրով, Տիրան, Արշակ Բ., Պապ և Վարազդատ:

Եթէ ըսենք թէ Շապուհ, հակառակ օտարազգի մը ըլլալուն, Հայաստանի այդ տաենուան քաղաքական պատմութեան զըլլաւոր դերակատարն է, հաստատ իրողութիւն մը չափազանցած չենք ըլլար: Իրմով կը սկսի հայկական երբեմնի պատկառազգու մարտական ուժին ջլատումը: Անոր յամառ գործունեութեան արդիւնքն է որ Հայ Արշակունիներուն հեղինակութիւնը քայքայման ճամբան կը բանէ: Հայ իշխաններու այն խումբը, որ դիւրութեան համար Պարսկական կուսակցութիւնն պիտի կռչենք յետ այսու, Շապուհի կողմէ իր ձրագրային ցացըունքները ստացած, անոր օրով կը հասնի իր աղետալի գործունեութեան արիւնակութիւնն մարիւնաներկ զագաթնակէտին: Հայ արիւն, հայ ձեռքերէ թափուած: Երկու Արշակունի թագաւորներ ինք ուղղակի կը խորտակէ, երրորդին ալ կործանման անուղղակի պատճառ կ'ըլլայ: Եւ երբ իր մահէն հայիւ հինգ տարի անցած՝ Հայաստանի մեծագոյն մասը Պարսիկ տէրութեան տակ կ'իշնայ, այս մեծ յաջողութեան վարկը և պատիւը կը պատկանի իրեն քան թէ իր զթօրէն ճարպիկ: Տեղին համեմատ երգում, չողոքորթութիւն, սպառնալիք, զրաւիչ խոստում, դաւ ու զաշնք, իր անհանդարամտքի զինարանին սիրական զէնքերը եղան արհաւրալի յիսուն տարիներու ընթացքին:

